ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

PATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

№ 324 Ս. Էջմիածին 7 Մայիսի 1993

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ամենապատիւ Սրբազան Եղբայր,

Մենք ջերմ գնահատանքով հաստատում ենք, որ վերջին երեք-չորս տարիների ընթացքում, սփիւռքի Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր թեմերից և շատ եկեղեցական համայնքներից, մեծագումար ու մեծաքանակ մարդասիրական օգնութիւններ են բաշխուել Հայաստանի և Արցախի մեր ժողովրդի կարիքաւոր ընտանիքներին, որբերին, հիւանդանոցներին ու այլ հաստատութիւններին՝ ի մխիթարութիւն բոլորին և բոլորիս: Այդ հայրենանուէր ծառայութիւնները շարունակւում են:

Բարձր գնահատանքի և Մեր օրհնութեան արժանի են նաև Ձերդ Ամենապատուութեան ու Ձեր թեմական կազմակերպութեան ծաւալած լայն գործունէութիւնը վերոյիշեալ նպատակներով: Ցուսով ենք, որ նաև յետ այսու Ձեր այս հայրենաշէն ծրագիրները պիտի շարունակեք կեանքի կոչել Ձեզ յատուկ բարի եռանդով ու անդուլ ճիգերով:

Այս կապակցութեամբ սոյն Մեր գրով կամենում ենք Ձեր ուշադրութեանը յանձնել, թէ յոյժ ցանկալի է, որ մեր եկեղեցու թեմերից ու եկեղեցիներից Մայր Հայրենիք առաքուած օգնութիւնների մասին նախօրոք տեղեակ պահուի Մայր Աթոռը և օգնութիւնները բաշխուեն՝ հայրենի տուեալ թեմական առաջնորդի անմիջական գործակցութեամբ: Սոյն պարագան հաճեցէք ի նկատի ունենալ, որովհետև երբեմն այս կարգը չյարգուելու հետևանքով մեզ մօտ անցանկալի կացութիւններ են ստեղծւում և դժգոհութիւններ առաջ գալիս:

Այս մտահոգութեամբ, Մենք անհրաժեշտ գտանք սոյն շրջաբերական նամակով մեր բոլոր եկեղեցական-թեմական կենտրոնների ուշադրութիւնը հրաւիրել սոյն հարցի վրայ:

Նոյն մտահոգութեամբ Մենք դիմեցինք նաև Տանն Կիլիկիոյ Աթոռի թեմերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջոցով:

Վարձքերնիդ կատար, սիրելի Սրբազան:

Գոհ պիտի լինենք, եթէ այս հարցի առնչութեամբ հաճէք Մեզ հաղորդել Ձեր առաջադրանքների և ապագայ ծրագրերի մասին:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վազգէն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վազգէն Ա
Կաթողիկոս Ամենայնոց
Հայոց

digitised by A.R.A.R.@